Հաստատում եմ՝
ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման
պետական ակադեմիայի ռեկտոր,
Փ/Ծ գեներալ-մայոր Հ. Մաթևոսյան

25 դեկտեմբերի 2019 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սամվել Շավարշի Ասատրյանի
«Բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հիմնախնդիրը, որը հետազոտվում է Ս.Շ. Ասատրյանի թեկնածուական ատենախոսության մեջ, խիստ արդիական է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում, այսօր արդեն իսկ ձևավորվում են ներքին ապահովագրության շուկայի հիմքերը, սակայն երկրի տնտեսական անվտանգության աստիճանի բարձրացման համար դեռևս լավ չեն օգտագործվում այդ շուկայի հնարավորությունները: Հատկապես, բնական աղետներից ապահովագրման համակարգը հանդիսանում է սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացման գործիք, ինչպես և կարևորագույն գործոն ամբողջ տնտեսության զարգացման համար:

Այսպիսով, ատենախոսության թեմայի ընտրությունը կարելի է համարել հիմնավորված, իսկ նրա արդիականությունը կասկած չի հարուցում:

Ս.Շ. Ասատրյանին հաջողվել է պատշաճ մակարդակով բացահայտել և ձևավորել հետազոտության հիմնախնդիրը, որոշել հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները, ձևակերպել գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքն առանձնանում է կառուցվածքային ամբողջականությամբ և

համակարգային մոտեցմամբ: Աշխատանքի բոլոր գլուխները տրամաբանորեն փոխկապակցված են:

Հեղինակին հաջողվել է գնահատել սեյսմիկ ռիսկը և առաջադրել դրա կառավարման մեխանիզմները, որոշել պետության համակարգող դերը բնական աղետների հետևանքների վերացման գործում, առաջարկել բնական աղետների ապահովագրման և վերաապահովագրման համակարգի ձևավորման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում, մշակել հանրապետությունում բնական աղետների հետևանքների վերացման համակարգային մոտեցումները՝ հիմք ընդունելով Հայաստանի և հարակից տարածաշրջանի սեյսմիկ ակտիվության վերլուծությունը:

Հայցորդը հետազոտության խնդիրները լուծելու նպատակով հիմնվել է ապահովագրության զարգացման հիմնախնդրի առանձին հարցերի վերաբերյալ մեթոդաբանական և տեսական մշակումների վրա, այդ թվում՝ բնական աղետներից ապահովագրության ուղղությամբ:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ մշակվել է հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում երկրաշարժերից ապահովագրության համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (164 աղբյուր) և հավելվածներից:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է բնական աղետներից ապահովագրության համակարգի ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերին: Առանձնակի քննության առարկա են դարձել բնական աղետները և դրանց հետևանքների վերացումը, բնական աղետների ռիսկերի կառավարումը և ապահովագրությունը որպես բնական աղետներից վերականգնողական աշխատանքների գործող մեխանիզմ:

Սույն գլխում մանրամասն ներկայացվել են բնական և մարդածին բնույթի աղետները և որոշվել, թե վերջիններից որոնք են առավել վտանգավոր Հայաստանի համար: Այստեղ դիտարկվել են նաև «ռիսկ», «աղետալի ռիսկ» և «սեյսմիկ ռիսկ» հասկացությունները, ինչպես նաև որոշվել են դրանց հետևանքների բնույթը:

Երկրորդ՝ «Բնական աղետներից ապահովագրման և վերաապահովագրման հիմնախնդիրները» խորագրով գլխում ներկայացվել է բնական բնույթի աղետների ռիսկերից ապահովագրման համակարգի ձևավորման միջավայրի փորձի վերլուծությունը: Դիտարկվել են ԱՄՆ-ի, Նոր Զելանդիայի, Ճապոնիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Իսլանդիայի, Ռումինիայի, Շվեյցարիայի, Թուրքիայի և Մեքսիկայի

ապահովագրման համակարգերը:

Մանրամասն քննարկման առարկա է դարձել պետության ունեցած դերը սեյսմիկ ռիսկերի կառավարման գործում: Դիտարկվել են նաև այդ կառավարման դրական և բացասական կողմերը:

2.3 ենթագլխում քննարկման առարկա է դարձել սեյսմիկ ռիսկերի մոդելավորումը և գնահատումը: Որոշվել է, որ Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկերի մոդելավորումն անհրաժեշտ է իրականացնել ամբողջ երկրի մակարդակով:

Երրորդ՝ «Հայաստանի Հանրապետությունում բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման ուղիները» խորագրով գլխում ներկայացվել է Սպիտակի երկրաշարժի վնասի ընդհանուր ծավալի բնութագիրը, աղետի գոտում բնակելի ֆոնդի վերականգնման վերլուծության շարժընթացը և Հայաստանում բնական աղետներից ապահովագրման և վերաապահովագրման համակարգի ձևավորման համակարգը:

Բացահայտվել են այն հիմնական հիմնախնդիրները, որոնցով պայմանավորված են եղել վերականգնողական աշխատանքների իրականացման դժվարությունները: Որոշվել են այն դրույթները, որոնց վրա պետք է հենվի պետությունը՝ բարձրացնելու այն սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, որն ուղղված է բնական բնույթի աղետներից պարտադիր ապահովագրման համակարգի ներդրմանը:

Այսպիսով՝ ատենախոսությունը կազմող 3 գլուխներում լուծվել են հետազոտության խնդիրները: Աշխատանքի արդյունքում ձևավորված եզրակացությունները կասկած չեն հարուցում:

Հետազոտության գիտական նորույթն ամրագրված է 4 ենթակետերում, որոնք նոր տեսական դրույթներ են:

Ատենախոսության բովանդակությունն ամբողջությամբ արտացոլված է ատենախոսի կողմից հրատարակված 7 հոդվածներում:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության տեքստին և ամբողջությամբ արտացոլում է նրա բովանդակությունը:

Դրական գնահատելով Ս.Շ. Ասատրյանի թեկնածուական ատենախոսությունը՝ կարելի է, նշել որոշ դիտողություններ և թերություններ, որոնք առաջին հերթին կրում են խորհրդատվական բնույթ, և կարող են հաշվի առնվել թեմայի շուրջ հետագա աշխատանքներ կատարելիս:

1. Աշխատանքի 1.2 ենթագլխում ներկայացված նյութերը, անշուշտ, հետաքրքրություն են ներկայացնում, սակայն բավարար չափով լուսաբանված չեն աղետների ռիսկերի կառավարման մի շարք հարցեր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղետների ռիսկերի կառավարման գործընթացը բազմաշերտ է, և պահանջում է տարատեսակ աշխատանքների իրականացում՝ մշտադիտարկում, կանխատեսում, վերլուծություն, ռիսկի գնահատում, կառավարման որոշումների ընդունում և իրականացում:

2. Լավ կլիներ, որ հիմնախնդրի մշակվածության աստիճանում նշվեին և աշխատանքում քննարկվեին նաև վերջին տարիներին հիմնախնդրի հետ առընչվող մի շարք հեղինակների աշխատանքներ (Հ. Մաթևոսյան, Ս. Բալասանյան, Ս. Նազարեթյան, Ա. Մանուկյան և այլք), մասնավորապես՝ Հ. Մաթևոսյանի «Ճգնաժամային կառավարում», Ս. Նազարեթյանի «1988 թ. Սպիտակի երկրաշարժի գոտու քաղաքների տարածքների սեյսմիկ վտանգը և ռիսկը» և «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության»՝ հատկապես, 5-րդ («Ռազմավարության իրականացման ռիսկերը և աղետների ռիսկի կառավարման ոլորտի մարտահրավերները») և 9-րդ («Իրականացման փուլերը և ակնկալվող արդյունքները») գլուխների պահանջները:

3. Օգտագործված գրականության ցանկում առանձնացված չեն նորմատիվ իրավական ակտերը, այբբենական կարգով դասավորված չեն (սկզբում հայերեն, ապա ռուսերեն, այնուհետ օտարալեզու) գրականությունը և ինտերնետ ռեսուրսները:

Ցանկի որոշ գրականություններ չունեն ամբողջական տվյալներ տպագրության մասին (օրինակ՝ թիվ 33, 60, 71, 84, 107, 164 և այլն): Գրականության ցանկում առկա են մի շարք տպագրական սխալներ:

4. Կարծում ենք, աշխատանքն ավելի տրամաբանական կառուցվածք կունենար, եթե 2.1 ենթագլխի նյութն ամբողջությամբ տեղափոխվեր առաջին գլուխ և դիտարկվեր ընդհանուր տեսական-մեթոդաբանական հարցերի շարքում և 2.1.1-ից մինչև 2.1.10 ենթագլուխները չնշվեին որպես ենթակետեր, այլ ծավալի փոքրությունից ելնելով ընդգծվեին միայն տվյալ երկրների անվանումները:

Փոխարենը 1.3 ենթագլուխը կարելի էր տեղափոխել երկրորդ գլուխ՝ որպես այդ գլխի վերաբերող նյութ:

5.Քանի որ բնական աղետներից ապահովագրման գործի արդյունավետությունն զգալիորեն կախված է պետության մասնակցությունից, ապա կարծում ենք ցանկալի

կլիներ 2.2 ենթագլխում ներառվեին նաև պետական մարմինների կոնկրետ անվանումներն ու նրանց անելիքները:

Սակայն վերոնշյալ դիտողություններն ամենևին չեն նսեմացնում Ս.Շ. Ասատրյանի թեկնածուական ատենախոսության գիտական արժեքը. այն ավարտուն, ամբողջական գիտական հետազոտություն է, իսկ առկա թերությունները կարող են վերանալ հեղինակի կողմից հետագա հետազոտական գործունեության ընթացքում:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների ու եզրակացությունների հավաստիությունը և հիմնավորվածությունը հիմք են հանդիսանում փաստելու, որ Ս.Շ. Ասատրյանի «Բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ճգնաժամային կառավարման ամբիոնի նիստում (արձանագրություն թիվ 6):

Նիստին մասնակցել են փրկարար ծառայության գեներալ-մայոր Հ. Մաթևոսյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Վ. Բրուտյանը, Հ. Պետրոսյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր Վ. Միքայելյանը, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մանասյանը, տնտեսագիտության թեկնածու, դոցենտներ Մ. Հակոբյանը, Ի. Նասիլյանը, Գ. Մանուկյանը, Վ.Բուլանիկյանը, Է. Նասիլյանը, Գ. Խաչատրյանը, տեխնիկական գիտությունների թեկնածուներ Դ. Թադևոսյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Հովհաննիսյանը, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Գսպոյանը, երկր.- հանք.

գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Խոնդկարյանը, դասախոսներ Ա. Մատինյանը, Կ.Ղալթաղչյանը, Տ. Գասպարյանը, Ա. Գևորգյանը:

ՃԿՊԱ ճգնաժամային կառավարման ամբիոնի վարիչ,
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Վ.Ա. Բրուտյան

Մ.գ.դ., պրոֆեսոր Վ.Ա. Բրուտյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՃԿՊԱ գիտքարտուղար՝ Ե.Շ. Բաղրամյան